ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

§ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ¦ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ¦ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և Նախագծի ընդունման անհրաժեշտությունը

2019 թվականի հուլիսի 7-ին ընդունվել և նույն թվականի օգոստոսի 4-ին ուժի մեջ է մտել §Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին¦ օրենքը[1], որում լայնածավալ փոփոխություններ են կատարվել 2021 թվականին[a] ի նկատի ունենալով Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի[2] լիազորությունների ծավալային աճը:

Հաշվի առնելով Ներկայացուցչի լիազորությունների ոլորտային բազմազանությունն ու գործառնական առանձնահատկությունները[a] գործնական կիրառության ընթացքում մինչ օրս առաջանում են այնպիսի իրավիճակներ, որոնց լուծման կարգավորումները հստակ նախատեսված չեն Օրենքի շրջանակներում, սակայն դրանց հստակ և որոշակի կարգավորման անհրաժեշտությամբ է պայմանավորված հիշյալ լիազորության արդյունավետ իրականացումը, տարաբնույթ շահերի հավասարակշռված պաշտպանությունն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացման որակն ու դրա վերջնարդյունքը:

Այսպես, ներկա պահին ուշադրություն պետք է դարձնել հետևյալ կարգավորումների հստակեցման ու որոշակիմանը[a]

1. Օրենքով նախատեսված է, որ Ներկայացուցչի լիազորությունների շրջանակում է Եվրոպական դատարանի[a] առանձին գանգատի առնչությամբ կիրառված միջանկյալ միջոցի կատարման կազմակերպման գործընթացը, սակայն նախատեսված չէ, որ Հայաստանի Հանրապետությունը ևս կարող է միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ պահանջ ներկայացնել Եվրոպական դատարան: Հիշյալ լիազորության իրականացումը բխում է ստանձնած միջազգային պարտավորություններից:

2. Օրենքի ներկա խմբագրությամբ Արդարադատության միջազգային դատարան ինչպես հայցադիմումն, այնպես էլ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը հնարավոր է ներկայացնել միայն Կառավարության որոշման հիման վրա, այնինչ Ներկայացուցիչը պետք է հնարավորություն ունենա Արդարադատության միջազգային դատարան ներկայացնել հայցի ապահովման միջոց

---

[1] Այսուհետ[a] Օրենք

[2] Այսուհետ[a] Ներկայացուցիչ

կիրառելու վերաբերյալ միջնորդություն: Փոփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության ներկայացումը, որպես կանոն, պահանջում է հրատապություն և գործելու արագություն և Կառավարության որոշման հիման վրա այդպիսի միջնորդություն ներկայացնելու պահանջը կարող է խոչընդոտել հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտ գործողությունները հնարավորինս արագ և արդյունավետ իրականացնելուն:

3. Օրենքով Ներկայացուցիչը լիազորված է ներկայացնել Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային արբիտրաժներում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության դեմ արբիտրաժային կամ վեճը դատարան հանձնելու վերաբերյալ ծանուցում ստանալու դեպքում կողմի հետ վեճն արտադատական կարգով լուծելու նպատակով վարել բանակցություններ, սակայն Օրենքը չի ամրագրում այդ բանակցությունների արդյունքում կնքվող համաձայնագրերի հետ կապված իրավական հարաբերությունները:

4. Օրենքով հստակ նախատեսված է, որ Ներկայացուցիչը լիազորված է արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնել ըստ անհրաժեշտության, սակայն Օրենքի կարգավորման առարկայից դուրս են մնացել Ներկայացուցչի իրավասություններն այն դեպքերի համար, երբ մյուս կողն է դիմում արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու համար և դրա արդյունքում իրականացվում է վարույթ:

5. Ներկա պահին Օրենքի կարգավորման շրջանակից դուրս է նաև միջազգային դատարաններ, Եվրոպական դատարանի վճիռների կատարման դեպարտամենտ և միջազգային արբիտրաժային կենտրոններ գործուղելու կապակցության Վարչապետի հաստատմանը թեկնածություն ներկայացնելու Ներկայացուցչի իրավասությունն այն դեպքում, երբ հիշյալ երկարաժամկետ գործուղումներն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության շահերի արդյունավետ և պատշաճ ներկայացման, ինչպես նաև Ներկայացուցչի լիազորությունների անխոչընդոտ իրականացման տեսանկյունից:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նկատի ունենալով վերոշարադրյալ չկարգավորված հարցերն Օրենքում մակարդակով կարգավերլու անհրաժեշտությունը[a] §§Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին¦ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու

մասին¦ օրենքի նախագծով[3] առաջարկվում է Օրենքի համապատասխան, հոդվածներում կատարել համապատասխան լրացումներ[a] ամրագրելով, որ[a]

1. Ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության անունից Եվրոպական դատարան կարող է ներկայացնել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ պահանջ:

2. Ներկայացուցիչն ունի հնարավորություն առանց Կառավարության որոշման Արդարադատության միջազգային դատարան ներկայացնել հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է §հայցի ապահովման միջոց¦ ձևակերպումը վերախմբագրել որպես §ժամանակավոր միջոց¦[a] Արդարադատության միջազգային դատարանի Ստատուտում առկա ձևակերպումների հետ համահունչ լինելու նպատակով:

3. Միջազգային արբիտրաժային կամ վեճը դատարան հանձնելու կամ միջազգային արբիտրաժային վեճերի շրջանակներում իրականացված բանակցությունների արդյունքում կարող է կնքվել հաշտության համաձայնագիր, որը պետք է ներկայացվի Կառավարության հաստատմանը, իսկ Կառավարությունը պետք է սահմանի համաձայնագրի ստորագրման և դրանից բխող պարտականությունների իրականացման կարգը:

4. Արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի առնչությամբ Ներկայացուցիչը կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը, իսկ չեղարկման վարույթ հարուցվելու դեպքում[a] Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը հիշյալ վարույթում:

5. Ներկայացուցիչը Վարչապետի հաստատմանն է ներկայացնում միջազգային դատարաններ, Եվրոպական դատարանի վճիռների կատարման դեպարտամենտ և միջազգային արբիտրաժային կենտրոններ գործուղվող իրավաբանների շրջանակը:

3. Նախագիծը մշակող մարմինը

Նախագիծը մշակվել է Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

[3] Այսուհետ[a] Նախագիծ

Նախագծով առաջարկվող կարգավորման ընդունման պարագայում Ներկայացուցչի օրենսդրորեն ամրագրված լիազորություններն ավելի հստակ կարգավորում կստանան, ինչի արդյունքում կբարձրանա Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության որակը և Ներկայացուցչի գործունեության արդյունավետությունը: